

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐՈՒ ՇՐՋԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԱՆՆԻ ԳԱՎԱՌԻ ՄԻՋԵՎ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կողմից Մեղրու շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը և Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Մարանդի գավառապետը Ազարակ-Նորդուզ շրջաններում ընդհանուր շուկա հիմնելու և երկու երկրների սահմանամերձ շրջաններում առևտրական համագործակցության, ապրանքավաճառականության և ապրանքների առուծախի վերաբերյալ համաձայնության եկան հետևյալի շուրջ.

## ՀՈՒՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության Մեղրու շրջանի և Իրանի Իսլամական Հանրապետության Մարանդի գավառի միջև կազմակերպել սահմանամերձ առևտուր: Մահմանամերձ առևտուրը իրականացվելու է ՀՀ Մեղրու և Իրանի Իսլամական Հանրապետության Մարանդի գավառի՝ այդ նպատակի համար առանձնացված տարածքներում (այսուհետ՝ շուկա):

## ՀՈՒՎԱԾ 2

Սույն Համաձայնագրով նախատեսված սահմանամերձ առևտրին թույլատրվում են բոլոր այն ապրանքները, որոնք, համաձայն Կողմերի գործող օրենսդրության, չունեն արգելքներ և սահմանափակումներ, դրանք սահմանում են ներմուծելու և արտահանելու համար:

Կողմերը պայմանավորվեցին տեղեկացնել միմյանց իրենց կառավարությունների կողմից արտահանման համար չթույլատրված ապրանքների ցանկի և դրա փոփոխությունների մասին:

Սահմանամերձ առևտրին ներկայացվող ապրանքների ծավալները չեն սահմանափակվում:

## ՀՈՒՎԱԾ 3

Սահմանամերձ առևտրի տարածքում ներկայացվող ապրանքները, ինչպես նաև նրանց նմուշները ազատվում են Կողմերի օրենսդրությամբ նախատեսված մաքսային տուրքերից:

Սահմանամերձ առևտրի տարածքում առևտրական գործարքները իրագործվելու են Կողմերի ֆիզիկական անձանց միջև՝ Կողմերի ներքին օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ՀՈՒՎԱԾ 4

Կողմերը համաձայնեցին մի շուկայից մյուս շուկան առևտրական գործարքներ իրականացնող անձանց և ապրանքների շարժման հետևյալ կանոնակարգին՝

Կողմերը լիազորում են սահմանամերձ շուկաների տնօրեններին գրանցել 40-ական առևտրական գործարք իրականացնող անձ, որոնց թույլատրվում է իրենց պետությունների տարածքներում գործող շուկայում ունենալ առևտրի կետեր և անարգելք այցելել միմյանց շուկաների տարածքը:

Այդ նպատակով առևտրական գործարքներ իրականացնող անձինք, շուկաների սպասարկող անձնակազմը և շուկաների տնօրինությունների ներկայացուցիչները ստանում են երկու Կողմերի իշխանությունների հետ համաձայնեցված անցագիր, որի ձևը կցվում է սույն Համաձայնագրին: Անցագրի արտաքին տեսքը տարբեր խմբերի համար տարբեր է:

Անցագիր ստացող, առևտրական գործարքներ իրականացնող անձանց ցուցակները փոխանակվում են շուկաների ղեկավարների միջև: Անցագրերը ստորագրվում են շուկաների տնօրինությունների ղեկավարների համար՝ տեղական իշխանությունների կողմից, առևտրական գործարքներ իրականացնող անձանց և շուկաների սպասարկող անձնակազմի համար՝ շուկայի ղեկավարների կողմից:

Հիշյալ անցագիրը ստացած՝ առևտրական գործարքներ իրականացնող անձը ձեռք է բերում շուկայի աշխատանքային օրերին անխափան անցուղարձ կատարելու իրավունք երկու շուկաների միջև:

Կողմերը պարտավորվում են՝

- մաքսային և սահմանապահ ծառայությունները որևէ խոչընդոտ չեն ստեղծի առևտրական գործարքներ

իրականացնող անձանց անցուդարձի և ապրանքների փոխադրումների համար,  
- միմյանց առևտրական գործարքներ իրականացնող անձանց ազատել որևէ պարտադիր վճարումներից:

#### ՀՈՂՎԱԾ 5

Սահմանամերձ առևտրի գոտում առևտուրը իրականացնում են ապրանքների վաճառքի, ինչպես նաև փոխանակման ձևով:

Սահմանամերձ առևտրի գոտում առևտուրը կարող է կատարվել, Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, Կողմերի ազգային դրամով կամ տարադրամով:

#### ՀՈՂՎԱԾ 6

Առևտրի գոտին աշխատում է շաբաթվա հինգ օրերը՝ ժամը 9-ից մինչև 16-ը, բացի երեքշաբթի և չորեքշաբթի օրերից:

Հասարակական կարգի և օրինականության ապահովումը սահմանամերձ առևտրի տարածքում և նրա շուրջը իրականացնում են Կողմերի լիազորված մարմինները: Բացառիկ դեպքերում՝ համաճարակի, տարերային աղետների և այլն, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ժամանակավորապես սահմանափակել մուտքը իր տարածք՝ նախապես՝ 24 ժամ առաջ, տեղեկացնելով մյուս Կողմին: Կողմերը պայմանավորվեցին ազգային և այլ տոն օրերի և այլ ոչ աշխատանքային օրերի մասին 7 օր առաջ տեղեկացնել միմյանց:

#### ՀՈՂՎԱԾ 7

Կողմերը պարտավորվում են սահմանամերձ առևտրի տարածքում ստեղծել առևտուրն իրականացնելու անհրաժեշտ պայմաններ:

#### ՀՈՂՎԱԾ 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

#### ՀՈՂՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը ոչ ուշ, քան 3 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցել Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է 1994 թվականի մայիսի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և պարսկերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի մայիսի 31-ից: